ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը (ԵՀԽ) 20-րդ դարի խոշորագույն կրոնական կառույցներից է, որն իր ուսերին է վերցրել եկեղեցիների միությունը խրախուսող զանազան կազմակերպությունների կոնսոլիդացման գործը: Այն նաև քարոզչական հսկայական մեխանիզմ է, որն անհնդհատ ընդլայնում է իր լիազորություններն ու գործառույթները և էկումենիկ շարժումն ուղղորդող գերիսկա կառույց է:

Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ ԵՀԽ-ի դերը էկումենիկ շարժման զարգացման ենթատեքստում: Նման եզակի կառույցն, անշուշտ, ունի իր առանձնահատկությունները: Նախ՝ պետք է նշել, որ ավելի քան կես դարի ընթացքում ԵՀԽ-ն իր ներկայացուցչական բնույթով դարձել է աննախադեպ կառույց. եթե 1948 թ. ԵՀԽ-ի անդամ եկեղեցիների թիվը հասնում էր 147-ի, ապա 2005 թ. տվյալներով այդ թիվը կազմել է 347, որի հոգևոր ենթակայության տակ գործում են աշխարհի 120 երկրների շուրջ 550 մլն. դավանորդներ, որոնք հիմնականում ներկայացնում են բողոքական և ուղղափառ հավատքները :

ԵՀԽ-ին անդամակցելու համար կրոնական ցանկացած կառույց պետք է ունենա առնվազն 25.000 անդամ: Կրոնական այն միավորումները, որոնց անդամների թիվը չի բավարարում այդ չեմը, սակայն գերազանցում կամ կազմում է 10.000 մարդ, կարող է դառնալ ԵՀԽ համագործակից անդամ. այս դեպքում միավորորումն ու կառույցները ԵՀԽ-ի աշխատանքներին կարող են մասնակցել առանց քվեարկելու իրավունքի:[1]

Համաձայն ԵՀԽ-ի սահմանադրության՝ կազմակերպությանն անդամակցելու համար հիմնական նախապայմանը որոշվում է հետևյալ հիմնարար սկզբունքի հիման վրա. «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եկեղեցիների համագործակցություն է, որի անդամները մեր Տեր Հիսուս Քրիստոսին ընդունում են իբրև Աստված և Փրկիչ»[2]: Այն սահմանվել է դեռևս 1938 թ. Ուտրեխտում, երբ «Հավատք և Կարգ» և «Կյանք և Գործ» կազմակերպությունների կողմից նշանակված 14 անձանցից բաղկացած կոմիտեն եկեղեցական մի

[1] **Constitutions and Rules of the Wold Council of Churches.** Directory of WCC. WCC publications, Switzerland, 2004, p. 65.

[2] **Stransky T.** World Council of Churches Dictionary of the Ecumenical Movement Geneva, 1991, p.1084.

քանի առաջնորդների հետ կազմեց ԵՀԽ-ի սահմանադրությունը: ԵՀԽ-ի առաջին գլխավոր քարտուղար Վիսերտ Հուֆտի բնորոշմամբ այդ բանաձևումը «լավագույնս բնութագրում է կառույցի էությունը»: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ այն լիովին չի բավարարում ԵՀԽ-ի էությունը լիարժեք բնութագրելու համար:

Այդ իսկ պատճառով էլ հետագայում այս բանաձևը փոփոխությունների ենթարկվեց և վերջնական տեսք ստացավ: Սակայն ավելի ուշ այն արևելյան եկեղեցիների ներկայացուցիչների ձեռքում դարձավ բուռն բանավեճերի և շահարկման պատճառ: Վերջիններս մասնավորապես պնդում էին, որ ԵՀԽ-ի հիմնարար սկզբունք հանդիսացող բանաձևը ծնունդ է տվել բողոքական միջավայրում և մատնանշում էին նրա ակունքը՝ Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ընկերության (YMCA) կողմից 1855 թ. Փարիզի առաջին կոնֆերանսի ժամանակ ընդունված հայտնի «Փարիզյան հիմքեր» անվանմամբ[3] բանաձևը: Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ընկերության նպատակն էր միավորել այն քրիստոնյա երիտասարդ մարդկանց, ովքեր Սուրբ Գրքի համաձայն Հիսուս Քրիստոսին համարում են իրենց Աստվածն ու Փրկիչը և ցանկանում են իրենց հավատքով ու կյանքով լինել նրա աշակերտները, միավորել իրենց ջանքերը՝ երիտասարդ մարդկանց մեջ Քրիստոսի թագավորության տարածման համար: Այս պատճառով էլ համագումարի ընթացքում և՛ ազատական, և՛ պահպանողական թևերի ներկայացուցիչները դժգոհում էին «մեր Տեր Հիսուս Քրիստոսին ընդունում ենք որպես Աստված և Փրկիչ» սահմանումից:

Անհամաձայնություններն սկսվել էին դեռ Ուտրեխտի 1938թ. հանդիպման ժամանակ, որտեղ սահմանադրությունը կազմելիս մշակվել էր այս բանաձևումը: Շատերը համաձայն չէին սրա հետ՝ վախենալով, որ այն կարող է վտանգել համագործակցությունը (koinonia)՝ ներմուծելով եկեղեցաբանական տարրեր: Դա, նրանց համոզմամբ, նշանակում էր գործընթացի դանդաղեցում, քանի որ եկեղեցիներն ստիպված կլինեին համաձայնության եզրեր փնտրել վարդապետական և եկեղեցաբանական բնույթի բարդ տարաձայնությունների մեջ: Ուրիշներն էլ պատրաստ էին որպես հիմք ընդունել Նիկիական հանգանակը կամ Առաքելական հավատամքը և պնդում էին, որ նոր ձևակեպումների անհարժեշտություն չկա և պետք է օգտագործել այն հարուստ պաշարը, որը ձեռք է բերվել դարերի ընթացքում:

---

[3] **Ruth Rouse.** Voluntary movements and the changing ecumenical climate. A History of the Ecumenical Movement. V. I, 1517 –1948, (ed. by Ruth Rouse and Stephen C. Neill), V. II 1948 – 1968, (ed. by Harold E. Fey), Geneva, 1993, p. 327.

Ուղղափառների բազմաթիվ ներկայացուցիչներ համարում էին, թե դավանաբանորեն այդ բանաձևումը «հնչեղ չէ» այնքանով, որքանով որ այն չի շեշտադրում Հիսուս Քրիստոսի մարդեղությունը: Մյուսները, խուսափելով դավանաբանական բնույթի ցանկացած սահմանումից, պնդում էին, որ համագումարն իր ուսերին նման գործառույթ չպետք է վերցնի: Ի դեպ, այս մոտեցումը մեծ նշանակություն ձեռք բերեց հետագայում այն իմաստով, որ ԵՀԽ-ն հավատքային վերջնական բանաձևեր մշակելու և եկեղեցիներին հրամցնելու իմաստով ինքն էր սահամանափակում իր լիազորություններն ու գործառությունները:

Սակայն տարաձայնությունները հետագայում աստիճանաբար հարթվեցին, և այդ բանաձևը դարձավ այն հենքը, որի վրա էլ կառուցվեց եկեղեցիների փոխգործակցությունը: «Եկեղեցիների համագործակցություն» (fellowship of churches) արտահայտությունն առանց լրացուցիչ դժվարությունների ընկալվեց և ընդունվեց գրեթե բոլորի կողմից, քանի որ այդ գաղափարն արտահայտված էր նաև Կ. Պոլիսի Տիեզերական պատրիարքի 1920թ. շրջաբերականում: Ուղղափառ եկեղեցիների համար այդ իրողությունը մեծ նշանակություն ուներ, քանի որ նրանց համար եկեղեցական համագործակցությունն զգալիորեն հեշտացրեց հոգեբանական բարդույթների հաղթահարման գործընթացը:

Բանաձևի վերաբերյալ համագումարի ընթացքում հնչած քննադատությունների արդյունքում ասպարեզ իջավ ԵՀԽ-ի գործառնության համար հիմնարար այդ սկզբունքի առավել խորն ուսումնասիրելու հրամայականը:

Խնդիրը կարգավորելու համար ստեղծվեց ենթակոմիտե, որը պետք է աշխատանքներ ծավալեր բանաձևի առավել օպտիմալ տարբերակ ստեղծելու ուղղությամբ: Սակայն երկարատև քննարկումների արդյունքում աշխատանքային խումբն որոշում ընդունեց, որ բանաձևը չպետք է փոխվի, քանի որ նրանում հստակ կերպով արտահայտված են Հիսուս Քրիստոսի մարդեղության ու երրորդության հավատամքները:

ԵՀԽ-ի 1954թ. Էվանստոնի երկրորդ համագումարը գրեթե միաձայն հանգեց այն եզրահանգմանը, որ ԵՀԽ-ի համար վերոհիշյալ հենքային բանաձևումը ոչ միայն հստակ ձևակերպում է Խորհուրդի ուղղվածությունը, այլև հանդես է գալիս իբրև էկումենիկ համագործակցության բնույթը պայմանավորող ռազմավարություն ծրագիր, որը մատնանշում է եկեղեցիների կողմից որոնվող համագործակցության սահմանները:

ԵՀԽ-ի 1954թ. Էվանստոնի և 1961թ. Նոր Դելիի համագումարի միջև ընկած ժամանակահատվածում կազմվեց մի նոր ենթակոմիտե, որին հանձնարարվեց մի անգամ ևս քննարկել խնդրո առարկա հիմնահարցին վերաբերող մանրամասները՝ այդ գործում ներգրավելով նաև աստվածաբանների:

Ենթակոմիտեի աշխատանքների հիման վրա ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեն 1960 թ. մշակեց նոր հիմնադրույթ, որն ընդունվեց Նոր Դելիի համագումարի ընթացքում:

Այն հնչում էր հետևյալ կերպ. «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եկեղեցիների համագործակցությունն է, որոնք խոստովանում են Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստված և Փրկիչ՝ համաձայն Սուրբ Գրքի և, հետևաբար, ցանկանում են միասին իրականություն դարձնել ընդհանուր կոչումը՝ ի փառս Մեկ Աստծու՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու»[4]: Ժողովականների մեծ մասի կարծիքով այդ բանաձևը համահունչ էր առաջին երկու տիեզերական ժողովների հաստատած երրորդաբանական հավատամքին, ինչն էլ պվելի «աստվածաշնչային (սուրբգրային) է դարձնում էկումենիկ շարժման հիմքերը»:

Այդ ամենն էլ ակնհայտ ցույց է տալիս, որ 1961 թ. Նոր Դելիի համագումարում վերջնականապես որոշվեց ԵՀԽ-ին անդամակցելու նախապայմաններից կարևորագույնի ճակատագիրը: Եվ չնայած դրան՝ պետք է նշել, որ բանաձևի ընդունման հետ կապված տրամադրությունները բավականին հակասական էին: Սակայն վերջին հաշվով հաղթեց «համագործակցության ոգին», ինչն էլ ԵՀԽ-ի ղեկավարությանը թույլ տվեց Նոր Դելիում հայտարարել, որ բանաձևի հայտարարումով սկիզբ է առնում, այսպես ասած, «էկումենիզմի մոբիլիզացման» դարաշրջանը, իսկ էկումենիկ շարժումը որակվեց իբրև «պանքրիստոնեական»:[5]

Քանի որ բանաձևը չպահպանեց իր նախնական ձևը և փոփոխման ենթարկվեց, շատերը կարծում էին, որ այն չի երկար չի գոյատևի, իսկ փոփոխման ճանապարհ ընտրած Նոր Դելիի օրինակը վատ նախադեպ կդառնա: Ստավախություն կար, որ նոր հավելումներ կատարելու արդյունքում բանաձևը կվերածվեր դավանաբանական բարդ հավատամքի, որը նոր հանգանակ դառնալու հավակնություն կունենար: Մասնակիցների շարքերում քիչ չէին նաև նրանք, ովքեր կարծում էին, թե «բարեփոխված բանաձևը ի վերջո կհանգեցնի քարացած ստերիոտիպերի, որոնք ապագայում հնարավոր չի լինի կոտրել»:

Այդ ամենով հանդերձ՝ ԵՀԽ անդամակցության բանաձևը դարձավ այն ընդհանուր գաղափարական հենքը, որի շուրջ պետք է համախմբվեին բազմաթիվ եկեղեցիներ: Դրանով իսկ կարելի է պնդել, որ այդ բանաձևը դարձավ ԵՀԽ էությունն արտացոլող ներքին այն շերտը, որը հետագայում կարևոր դեր

---

[4] **H. Kruger**, The Life and Activities of the World Council of Churches. A History of the Ecumenical Movement. V. I. 1517 –1948. (ed. by Ruth Rouse and Stephen C. Neill), V. II 1948 –1968. (ed. by Harold E. Fey), Geneva, WCC, 1993. p. 35.

[5] **Кравев Ю. В.** Христианский экуменизм. М., 1980, с.16.

խաղաց ԵՀԽ կազմում նոր եկեղեցիների անդամակցության շրջանակի մեծացման գործում:

Նշված բանաձևի ընդունումը, որով վավերացվեց ԵԽՀ անդամակցության հարցը, օրակարգից չհանեց իր հետ օրգանապես կապված այն հարցը, թե եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն ինչ կարգավիճակով պետք է գործունեություն ծավալի: Վերջինս ենթադրում է մի ամբողջ շարք համալիր հարցերի քննարկում, որոնցից առավել կարևորվում էին հետևյալները.

ա) անդամակցող եկեղեցիները պետք է հստակ պատկերացում ունենան, թե իրենք ինչպիսի կառույցի հետ են համագործակցում, և ինչպիսի սահմանափակումներ էին սպասվում իրենց այդ կառույցի ներսում,

բ) ԵՀԽ-ի գործառույթների հստակ սահմանում,

գ) ԵՀԽ-ի նպատակների և դերի հստակեցում:

Այդ ամենն ակնհայտ էր դարձնում այն, որ նման կառույցը նոր երևույթ էր եկեղեցիների համար: Անառարկելի էր մի բան, որ քրիստոնեության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել էր կրոնական հսկայական մի կառույց, որին անդամակցող տարբեր եկեղեցիները պետք է գործեին միասնաբար: Եվ բնական է, որ ԵՀԽ-ին անդամակցել ցանկացող եկեղեցիների մոտ տրամաբանական հարց էր առաջանում՝ անդամակցելով ԵՀԽ-ին՝ արդյո՞ք ստիպված չէին լինի փոխել իրենց եկեղեցաբանական կարգավիճակը կամ դավանաբանական բնույթի վերանայումներ կատարել: Հարցը բավականին սրությամբ էր դրվել և այն պատճառով, որ սկզբնական շրջանում ԵՀԽ-ն եկեղեցիներին մի տեսակ անորոշ կառույց էր թվում, և վերջիններիս համար անհարժեշտ էր ճշտել ինչպես ԵՀԽ-ի կարգավիճակը, այնպես էլ՝ իրենց կարգավիճակն այդ «միության» շրջանակներում:

Այդ մտավախությունների արձագանքը հանդիսացավ ԵՀԽ Ամստերդամի համաժողովը, որը փորձ կատարեց որոշակիորեն սահմանել ԵՀԽ-ի գործառույթները և նպատակները. Դրա արդյունքում հրապարակ իջավ ԵՀԽ-ի ևս մի հիմնարար փաստաթուղթ, որը հռչակում էր «... Խորհուրդը ցանկանում է ծառայել իր անդամ հանդիսացող եկեղեցիներին, գործիք դառնալ, որը կօգնի միասնաբար և նվիրվածությամբ ծառայել Հիսուս Քրիստոսին, համագործակցել այն հարցերում, որոնք անհրաժեշտ է լուծել միասնական ուժերով: Սակայն Խորհուրդը հեռու է իրեն անդամակցող եկեղեցիների որևէ գործառույթ ուզուրպացնելու ցանկությունից, չի ցանկանում վերահսկել եկեղեցիները կամ վերջիններիս համար որևէ օրենք հաստատել ...»[6] :

---

[6] Церковь, Церкви и Всемирный Совет Церквей. Православие и экуменизм : документы и материалы, 1902-1998, М., 1999, с. 221.

Ինչպես ակնհայտորեն երևում է՝ Ամստերդամի հռչակագիրը ձգտում է հասնել այն բանին, որ ԵՀԽ-ն իր մեջ որևէ վանող ատրիբուտ չպարունակի, և կառույցը ներկայանա իբրև միջոց, այլ ոչ թե նպատակ: Այդ ամենից հստակ երևում է, որ ԵՀԽ-ն վճռապես հրաժարվում է հանդես գալ իբրև մի այնպիսի հատուկ եկեղեցական կառույց, որը վեր կանգնած լիներ իրեն անդամակցող այլ եկեղեցիներից: Դրանով իսկ հաստատվեց, որ ԵՀԽ-ն անդամակցող եկեղեցիների ամբողջություն է:

Ամստերդամում ընդունված բանաձևը հստակ կերպով սահմանում է նաև ԵՀԽ-ին բնորոշ մի առանձնահատկությունը. այն, որ Խորհուրդը չի ցանկանում վերածվել մի այնպիսի կառույցի, որը ղեկավարվում է կենտրոնացված ադմինիստրատիվ ապարատի կողմից: Այդ կապակցությամբ բանաձևի մեջ հռչակվում է հետևյալ սկզբունքը. «Խորհուրդի իսկական ցանկությունն է, որպեսզի Եկեղեցիները մերձենան Քրիստոսին և դրանով մերձենան միմյանց»[7]:

Միջեկեղեցական համագործակցության համար այդ պայմաններն անհրաժեշտ էին, բայց ոչ բավարար: Մասնավորապես, Ամստերդամի սահմանումները դեռևս բավարար լույս չէին սփռում այն առնչությամբ, որ եկեղեցիները լիարժեք պատկերացում կազմեին ԵՀԽ-ի գործառույթների վերաբերյալ: Անհրաժեշտ էր հրապարակել լրացուցիչ նոր պարզաբանումներ, որոնք առավել սպառիչ տեսք կհաղորդեին հիմնահարցին:

Անորոշ այդ իրավիճակից դուրս գալու նպատակով ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեն 1950 թ. Տորոնտոյի հավաքից հետո շրջանառության մեջ դրեց ծրագրային մի նոր փաստաթուղթ, որը բավականին լուրջ մշակված հռչակագրային տեսք ուներ: Դա էկումենիկ շարժմանը բավականին հայտնի «Եկեղեցի, Եկեղեցիներ և Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ» խորագիրը կրող հայտարարությունն էր, որը նպատակ էր հետապնդում պարզաբանել Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդի եկեղեցաբանական նշանակությունը:

Այդ համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Տորոնտոյի սկզբունքների» ձևավորման նախապատմությունը: Վավերագրերը համերաշխ կերպով վկայում են՝ նշված սկզբունքների ձևավորմանը մեծապես խթանել է այն, որ ԵՀԽ-ի կարգավիճակով շահագրգիռ էր նաև կաթոլիկ եկեղեցին: Այդ նպատակով կողմերի ներկայացուցիչները հանդիպեցին Փարիզում՝ քննարկելու խնդրո առարկա հարցը: Այս հանդիպումն էլ էկումենիկ շարժման առաջնորդներին մեծապես օգնեց հասկանալ, որ համագործակցության այս

---

[7] Նույն տեղում, էջ 221:

փուլում էլ անհրաժեշտ է պարզաբանել, թե ի՞նչ է ԵՀԽ-ը և, առավելևս, ինչ չէ:[8] Այդ փաստը բավականին հետքրքիր է և այն առնչությամբ, որ այդ ժամանակահատվածում էկումենիզմի նկատմամբ բավականին կարծր դիրքորոշում որդեգրած կաթոլիկ եկեղեցին գործնականում դարձավ էկումենիկ շարժման մեջ այդքան կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթի մշակման մասնակիցը :

Էկումենիզմի պատմության մեջ «Տորոնտոյի սկզբունքները» կարևորվում են այնքանով, որքանով որ դրանով փորձ է կատարվում առավել կոնցեպտուալ կերպով բնութագրել ԵՀԽ-ն, մասնավորապես նրա գործառույթներն ու նպատակները : Այդ կապակցությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն սահմանափակումները, որոնք վերաբերում են ԵՀԽ գործունեության նպատակներին: Հաստատված սկզբունքները հետևյալն են.

1. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը գերեկեղեցի չէ և երբեք չպետք է գերեկեղեցի դառնա,
2. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նպատակը ամենևին էլ եկեղեցիների միավորման հարցում պայմանավորվածության հասնելը չէ, սեփական նախաձեռնությամբ դա կարող են իրականացնել միայն իրենք՝ եկեղեցիները, այլ՝ եկեղեցիների միջև կենդանի կապեր ստեղծելն է և եկեղեցու միավորման հարցի շուրջ ուսումնասիրություններ ու քննարկումներ կազմակերպելն է,
3. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը չի կարող հենվել եկեղեցական որոշակի մեկ հայեցակարգի վրա,
4. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդին անդամակցելը չի նշանակում, թե այս կամ այն եկեղեցին հարաբերական է համարում իր սեփական հայեցակարգը,
5. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդին անդամակցությունը չի նշանակում եկեղեցիների միությանը վերաբերող հատուկ վարդապետության ընդունում:[9]

Այդ ամենն աներկբա վկայում է, որ Տորոնտոյում ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեն սահմանեց ծրագրային նշանակության այն պայմանները, որոնց առկայությունը պետք է նպաստեր անդամ եկեղեցիների փոխհարաբերությունները զարգացնելուն, ինչպես նաև ԵՀԽ-ի և, ընդհանրապես, եկեղեցիների միջև համագործակցության ծավալմանը:

---

[8] **Morris West.** Toronto statement. Dictionary of the Ecumenical Movement. Geneva, 1991, p. 1008.
[9] **Catholicos Aram I Keshishian.** Conciliar fellowship, Antelias. 1996, p. 6.

Չի կարելի և չնկատել այն, որ «Տորոնտոյի սկզբունքները» անուրանալի դեր կատարեցին հաղթահարելու այն բոլոր «բացասական» ստերիոտիպները, որոնք կարող էին վնասել ԵՀԽ-ի վարկին:

Տորոնտոյի հայտարարությունը ունի նաև չափազանց կարևոր մի այլ գործառնական նշանակություն ևս: Այն հստակորեն ի ցույց է դնում, որ ԵՀԽ-ամենևին էլ մեծ հավակնությունների չի ձգտում:[10] Դրանով ԵՀԽ-ն ևս մեկ անգամ ապացուցեց, որ հավատարիմ է իր սահմանադրական սկզբունքներին: Այն միաժամանակ հավաստում է նաև չափազանց էական այն փաստը, որ ԵՀԽ-ը չի կարող օրենսդիր գործառույթներ ունենալ, այսինքն՝ չի կարող գործել իր անդամ եկեղեցիների փոխարեն, հակառակ պարագայում նա կկորցնի հենց նույն անդամ եկեղեցիների աջակցությունը: Այստեղից հիմնական հետևությունը՝ ԵՀԽ-ին անդամակցությունն ամենևին չի նշանակում, թե մասնակից եկեղեցիները կազմում են օրգանական մի կառույցի բաղկացուցիչ մասը, կառույց, որն ինքն է որոշումներ կայացնում բոլորի անունից: Հետևաբար, Տորոնտոյի հայտարարության համաձայն՝ յուրաքանչյուր եկեղեցի պահպանում է ԵՀԽ-ի գործողությունները կամ գաղափարները հերքելու կամ ընդունելու իր սահմանադրական իրավունքը: ԵՀԽ-ի եկեղեցաբանական նշանակության հիմնական բնութագրիչներից հաջորդն այն է, որ համագործակցող յուրաքանչյուր եկեղեցու հրահանգված է վերհիշել իր էկումենիկ փորձը և այն հիմք ընդունելով՝ կառուցել իր քաղաքականությունը: ԵՀԽ-ի գաղափարախոսները ամեն ինչ անում են, որպեսզի մասնակից եկեղեցիներին համոզեն այն բանում, որ կառույցը հիմնված է կամավորության սկզբունքի վրա և պարտադրանքի քաղաքականություն չի վարում, ուստի՝ անդամակցող ցանկացած եկեղեցի ինքն է որոշում մեկ այլ եկեղեցու հետ համագործակցելու կամ հակառակը կատարելու հարցը: Հայտարարության ընդհանուր տրամաբանությունն այն էր, որ ԵՀԽ-ին անդամակից յուրաքանչյուր եկեղեցի ունի այն լիազորությունները, այսինքն՝ անդամակցությունը ոչ թե սահմանափակում է տվյալ եկեղեցու լիազորությունները, այլ հակառակը՝ ընդլայնում է դրանք:

Տորոնտոյի հայտարարությունը պետք է դիտարկել մի այլ տեսանկյունից ևս: Բանն այն է, որ այն փորձում է անդամ-եկեղեցիներին վստահեցնել այն բանում, որ ԵՀԽ-ն ինչ-որ որոշակի (կոնկրետ) աստվածաբանական դպրոցի դավանաբանական բանկի կրող չէ և պատրաստ է քննարկել անդամակցող յուրաքանչյուր եկեղեցու եկեղեցաբանական հայեցակարգ, եթե վերջինս

---

[10] Նշենք, որ «Տորոնտոյի սկզբունքների» հաչակումը կարևոր նշանակություն ունեցավ նաև կաթոլիկ միջավայրում: Մինչ այդ վերջիններս կարծում էին, թե ԵՀԽ-ը մի կառույց է, որը ձգտում է մրցակցել Կաթոլիկ եկեղեցու հետ:

համամիտ է ԵՀԽ-ին անդամակցելու նախապայմաններին՝ ԵՀԽ-ի հիմնարար սկզբունքներին:

Իսկ այն իրողությունը, որ ԵՀԽ-ին անդամակցությունը կարող էր իրականանալ առանց նախապայմանների, էլ ավելի էր խթանում ԵՀԽ-ի ընդլայնման գործընթացը: Ըստ էության վերջինս պետք է համարել Տորոնտոյի հայտարարության հիմնական նպատակը՝ հնարավոր անդամակիցներին համոզել այն բանում, որ ԵՀԽ-ն «ամբողջատիրական» հավակնություններ չունի:

Այդ առնչությամբ պետք է նկատել նաև, որ ԵՀԽ-ի գաղափարախոսները շատ լավ հասկանում էին, որ մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր քննադատում էին էկումենիկ շարժումը՝ համարելով, որ այն ժամանակի ընթացքում դառնում է չափից դուրս հանդուրժողական: Նրանց կարծիքով էկումենիզմը «միության» որոշակի տեսակ է, որը ինչ-որ ժամանակահատվածում կարող է վճռական դեր կատարել էկումենիզմի պատմության մեջ: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե ԵՀԽ-ը կոնկրետ (պաշտոնական) եկեղեցաբանական հայեցակարգ որդեգրել: էկումենիկ շարժման հետագա ընթացքը ցույց տվեց, որ ԵՀԽ-ն փորձում է գործել՝ հենվելով որոշակի չափորոշիչների վրա և բոլոր դեպքերում խուսափում է եկեղեցաբանական-հայեցակարգային գլոբալ ծևակերպումներից:

Կենտրոնական կոմիտեն հրաշալի հասկանում էր նաև, որ ԵՀԽ-ի շարքերում քիչ չեն նրանք, ովքեր համագործակցությունը հասկանում էին բացարձակ միակարծություն, նաև՝ վարդապետական միավորման իմաստով: Այս մոտեցման կողմնակիցները պահանջում էին, որ համագործակցության շրջանակներում ծևավորվի դավանաբանական և ծիսակարգային ընդհանուր դաշտ: Եւ վերջապես՝ ազդեցիկ թիվ էին կազմում և նրանք, ովքեր պնդում էին, թե էկումենիկ ընդհանուր մոտեցումներն ամենևին էլ էական չեն քրիստոնեական միություն հաստատելու համար: Տորոնտոյի հայտարարության մեջ այս տեսակետներից և ոչ մեկը վերջնական ճշմարտություն չէր համարվում: Առավել էական էր համարվում այն, որ այդ բոլոր հայեցակարգերը դինամիկ կապի մեջ լինեն միմյանց հետ: Այսինքն՝ ԵՀԽ-ի գաղափարախոսների համար առավել կարևոր էր տարբեր տեսակետների ներդաշնակ գոյությունը:

ԵՀԽ-ին անդամակցությունը գործնականում ենթադրում էր հետևյալ պայմանը. «Եկեղեցիները պետք է միմյանց վերաբերվեն համերաշխությամբ, օգնեն միմյանց և զերծ մնան այնպիսի քայլերից, որոնք ընդունելի չեն եղբայրական հարաբերություններում»[11]:

---

[11] **The Church, the Churches and the World Council of Churches.** WCC Central Committee. Toronto, 1950, in The Ecumenical Movement, An Anthology of Key Texts and Voices. Geneva, WCC Publications. 1997, p. 463-469.

ԵՀԽ-ի երրորդ համագումարում Տորոնտոյի համաձայնագիրը վավերացվեց այն առնչությամբ, որ վերջինս լավագույն կերպով արտահայտում էր Խորհրդի բնության մասին մեր (ԵՀԽ-ի՝ Դ.Մ.) պատկերացումը»[12]: Չնայած «Տորոնտոյի սկզբունքների» հասցեին հնչած քննադատություններին՝ այն մինչև օրս էլ բավականին արդյունավետ ծառայում է ԵՀԽ-ին և յուրահատուկ ուղեցույց է էկումենիկ շարժման մասնակից եկեղեցիների համար: Եվ այդ ամենով հանդերձ՝ պետք է ենթադրել, նաև, որ ինչպես համագործակցության ցանկացած այլ փաստաթուղթ, այնպես էլ «Տորոնտոյի սկզբունքները» ժամանակի թելադրանքով վերանայման և փոփոխության կարիք ունեն:

Դժվար չէ ենթադրել, որ այդ ամենով ԵՀԽ-ի էության և գործառույթների հետ կապված հիմնախնդիրներն ամենևին էլ չկորցրեցին իրենց արդիականությունը: Նույնիսկ այն կարծիքն էլ է ձևավորվել, թե որքան ավելանում է սահմանումների թիվը, այնքան ավելի է մեծանում դրանց անհրաժեշտությունը :

Այդ հրամայականով թելադրված էլ Նոր Դելիից հետո նշված հարցը մեկ անգամ ևս բարձացվեց «Հավատք և Կարգ» չորրորդ միջազգային կոնֆերանսում (Մոնրեալ, 1963թ.), որը խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ ընդունեց հետևյալ ուղերձը. «Խորհուրդը (ԵՀԽ-Դ.Մ.) եկեղեցի չէ. այն չի ձգտում դառնալ Եկեղեցի կամ Միակ Եկեղեցի... այլ իր ծառայություններն է առաջարկում եկեղեցիներին և Եկեղեցուն»:[13]

Այդ համատեքստում չափազանց ակնհայտ է դառնում ԵՀԽ-ի «հիվանդագին» մտավախությունը, որի ազդեցությամբ այն գործնականում անընդհատ փորձում է ապացուցել, թե ինքն այն չէ, ինչ իրեն պատկերացնում են: ԵՀԽ-ի այդ մտավախությունը կարելի է կապել մի շարք օբյեկտիվ գործոնների հետ, որոնցից արժանահիշատակ են հետևյալները.

ա) համագործակցող եկեղեցիներին այդպես էլ չհաջողվեց մշակել և չկարողացան զարգացնել այնպիսի հայեցակարգ կամ համակարգ, որի օգնությամբ հանարավոր լիներ համապատասխան ձևով նկարագրել «էկումենիկ փորձն ու իրողությունները», որոնք, ըստ էության, բոլովին նոր երևույթ էին եկեղեցու պատմության մեջ,[14]

---

[12] H. Kruger. The Life and Activities of the World Council of Churches. A History of the Ecumenical Movement. V. I, 1517 –1948, (ed. by Ruth Rouse and Stephen C. Neill), V. II 1948 – 1968, (ed. by Harold E. Fey). p. 30.

[13] Նույն տեղում՝ էջ 30:

[14] Այդ կապակցությամբ որոշ մասնագետներ կարծում են, որ փորձ էր կատարվում էկումենիկ իրողությունները հասկանալ մինչէկումենիկ դարաշրջանի չափանիշներով և դրանով էլ պայմանավորված են հասարիստոնեական միություն տանող ճանապարհի արհեստական խոչընդոտների ի հայտ գալը:

բ) բարդություն էր առաջացել նաև այն առումով, որ տարբեր եկեղեցիներ և մասնակից հոգևոր այլ միավորումներ միանգամայն տարբեր բառապաշար էին օգտագործում միևնույն խնդիրը նկարագրելու համար:

Բայցևայնպես պետք է ընդունել, որ տվյալ պահի համար առաջնայինը Տորոնտոյի այն հայտարարությունն էր, որ ԵՀԽ-ը գերեկեղեցի չէ և ոչ մի պայմանի թելադրանքով չպետք է այդպիսին դառնա, թեև եկեղեցական եզրաբանությամբ հնարավոր չեղավ հստակորեն սահմանել, որ ԵՀԽ-ն **ինքնին եկեղեցի** չէ և վերջինիս անդամակցելու պարագայում եկեղեցիների, այսպես ասենք, «եկեղեցաբանական նկարագրից» ոչինչ չի պակասում:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարող ենք եզրակացնել, որ բոլոր մտավախություններով եւ մտահոգություններով հանդերձ՝1948 թ. սկսած ԵՀԽ-ի անդամ եկեղեցիները հստակ հասկանում էին, որ այդ կառույցը ոչ գերեկեղեցի է, ոչ տիեզերական եկեղեցի, ոչ էլ՝ «համաշխարհային եկեղեցու սկիզբ»: Նրանք ընդունում էին նաև, որ ԵՀԽ-ն մի կառույց է, որտեղ եկեղեցիները միակամ ընդհանուր վկայություն են բերում Քրիստոսին ծառայելու գործում և փնտրում են այն միությունը, որ Հիսուս Քրիստոս կամենում էր միասնական եկեղեցու համար, ինչպես նաև համագործակցում են այն խնդիրների շուրջ, որոնք համատեղ ջանքեր ու գործողություններ են պահանջվում «եկեղեցական կյանքը նորացնելու» համար:[15]

Պետք է կարևորել այն, որ ԵՀԽ-ն իր ձևավորման առաջին օրվանից գտնվում է, այսպես ասենք, «ինքնաբնկալման» փուլում: Այն գրեթե անընդմեջ կարիք ունի վերանայելու իր բնույթին ու նպատակին առնչվող խնդիրները, որոնք լայնորեն քննարկվում են ԵՀԽ հանձնախմբերի, խորհրդատու մարմինների և անձնակազմի հանդիպումների ժամանակ: ԵՀԽ-ը պարբերաբար փորձում է վերաարժեքավորել էկումենիկ շարժումը, որի կազմակերպչական ձևերից մեկն էլ ինքն է: Մյուս կողմից, ԵՀԽ-ը զգուշավոր է էկումենիկ շարժման վերաբերյալ վերջնական սահմանումներ տալու առումով, բայց օգնում է անդամակցող միավորներերին՝ տեղական, ազգային, տարածաշրջանային, գլոբալ և, հատկապես, ԵՀԽ-ի հետ հարաբերություններում գնահատել իրենց էկումենիկ պարտավորություններն ու գործունեությունը:

---

[15] Церковь, Церкви и Всемирный Совет Церквей. Православие и экуменизм: документы и материалы, 1902-1998. с. 228.